«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 78/03 -2

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 12.04.2023թ. ժամը 17:50

Համաձայն «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝23.02.2023թ. քաղաքացի-լիազոր անձ՝Մելանյա Արթուրի Դիմիտրյանից ստացված թիվ 21 դիմում-բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով քաղաքացի Լիանա Գևորգյանի սնանկության գործով կառավարիչ՝Արմինե Մովսիսյանի գործողությունների /անգործության/,մասնագիտական վարքագծի կանոնների խախտման,փաստերի նկատմամբ վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով,կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում արծածված հանգամանքների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար՝ 2023 թվականի Մարտի 24-ի հետաձգված և 12.04.2023թ-ին ժամ 17:30-ին՝ ք.Երևան, Արշակունյաց 5 հասցեում, հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի հետաձգված նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյան
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Դիմումատու՝քաղաքացի-լիազոր անձ՝Մելանյա Արթուրի Դիմիտրյանը :
Սնանկության գործով կառավարիչ՝ Արմինե Մովսիսյանը :

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձանժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյան
Դիմումատու՝ քաղաքացի-լիազոր անձ՝Մելանյա Արթուրի Դիմիտրյանը պատշաճ ծանուցված լինելով նիստի տեղի և ժամի վերաբերյալ բայց իր ներկայությունը չեր ապահովել:
Սնանկության գործով կառավարիչի լիազոր անձ-փաստաբան Վարազդատ Ասատրյանը:
Սնանկության գործով կառավարիչ՝Արմինե Մովսիսյանը բացակայում էր:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝
1. «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝23.02.2023թ. քաղաքացի-լիազոր անձ՝Մելանյա Արթուրի Դիմիտրյանից ստացված թիվ 21 դիմում-բողոքի հետագա ընթացքը ապահովելու՝ քաղաքացի Լիանա Գևորգյանի սնանկության գործով կառավարիչ՝Արմինե Մովսիսյանի գործողությունների /անգործության/,մասնագիտական վարքագծի կանոնների խախտման,փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, դիմումում արծածված հանգամանքների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ անցկացման հարցը:

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը բացեց նիստը ստուգեց ներկաների ինքնությունը և նշեց,որ բողոքաբեր քաղաքացի-լիազոր անձ՝Մելանյա Արթուրի Դիմիտրյանին 03.04.2023թ-ին գրավոր,փոստային ծառայության միջոցով, ծանուցում է ուղարկվել նիստի տեղի և ժամի վերաբերյալ բայց դիմումատուն իր ներկայությունը չի ապահովել:Նախագահն նշեց նաև որ դիմումատուի ծանուցումը ստանալու վերաբերյալ փոստային անդորագիրը ստացվել են ըստ որի ծանուցումը ստացվել է բողոքաբերի կողմից 10.04.2023թ-ին:Հանձնաժողովի նախագահն տեղեկացրեց նաև որ սնանկության գործով կառավարիչը միչև նիստը հեռախոսակապի միջոցով տեղեկացրել է,որ էլեկտրոնային տարբերակով դիմում և փաստաթղթեր է ներկայացրել,ըստ որի հայտնել է որ ինքը քաղաքում չէ

և նիստին չի կարող մասնացել, խնդրել իր բացակայությունը համարել հարգելի:Հանձնաժողովի նախագահն հանձնաժողովի անդամներին ներկայացրեց դիմումը և կից փաստաթղթերը արդեն թղթային տարբերակով,այն է ստացված պատասխաններ և դատարանի որոշում:

Հանձնաժողովի նախագահն խնդրեց հանձնաժողովի անդամներից հայտնել կարծիքներ առանց դիմումատուի և կառավարչի նիստը շարունակելու վերաբերյալ:

Հանձնաժողովի անդամ Ռ.Խալաթյանը հայտնեց այն կարծիքը որ արդեն երկու անգամ նիստերը հետաձգվել է և բողոքաբերը ոչ մի անգամ չի մասնակցել որևէ նիստի և աչ մի կերպ չի արձագանքել ծանուցումներին,չնայած այն փաստին որ հանձնաժողովին հետաքրքրում էր բողոքաբերի փաստարկներից մեկի՝ հատուկ հաշվի չբացմանը և որպես հատուկ հաշիվ կառավարչի անձնական բանկային հաշվի օգտագործման բայց իր կատարած փոխանցումները այդ հաշվին և այդ հիմքով պահանջը ածուրդը կայացած ճանաչելու վերաբերյալ: Հանձնաժողովի անդամը նշեց որ իր կարծիքով պետք է նիստը շարունակվի առանց բողոքաբերի ներկայության քանի որ հանձնաժողովի կողմից իրականացվել են այն բոլոր հնարավոր անհրաժեշտ միջոցները բողոքաբերի ներկայությունը ապահովվելու համար:

Հանձնաժողովի անդամ Հ.Գևորգյանը համաձայնեց այդ կարծիքի հետ և ավելացրեց,որ կառավարչի կողմից ապահովել է ներկայացուցչի ներկայությունը և ներկայացվելիք փաստաթղթերը,ուստի կառավարչի բացակայությունը կարելի է համարել հարգելի և նիստը շարունակել առանց կառավարչի:

Հանձնաժողովի նախագահն նույնպես համաձայնեց արտահայտված կարծիքների հետ և որոշեցին նիստը շարունակել առանց դիմումատուի և սնանկության գործով կառավարչի;

Շարունակելով նիստը հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամներին տրամադրեց կարգապահական վարույթում ստացված պարզաբանումը կից փաստաթղթերը և խնդրեց հանձնաժողովի անդամներից ուսումնասիրելով փաստաթղթերը հայտնել կարծիքներ եզրակացության համար:

Քննարկումների ընթացքում կառավարչի ներկայացուցիչ՝Վ.Ասատրյանը մեկ անգամ ևս ներկայացրեց կառավարչի դիրքորոշումը և խնդրեց արձանագրել հետևյալը՝

- դիմումատուի կողմից որևէ վերաբերվելի և թույլատրելի ապացույց չի ներկայացվել,ավելին ներկայացված ապացույցների մի մասը պարունակում է բանկային գաղտնիք,ինչը կարող է հրապարակվել միայն դատարանի որոշման հիմքով:Կառավարիչ Ա.Մովսիսյանը չի կատարել ոչ մի արարք որ այս հանձնաժողովի լիազորությունների շրջանակներում կարող է որոկավորվել որպես կարգապահական խախտում և որոկազրկի կառավարիչների ինստիտուտը:Չկան կառավարչին կարգապահական տուժի ենթարկելու համար ոչ մի հիմք:

Հանձնաժողովի անդամ Հ Գևորգյանը հայտնեց,որ լսելով կարծիքները ուսումնասիրելով դիմումը,պարզաբանումը և վարույթին ներկայացված փստաթղթերը գալիս է այն կարծիքին,որ կարգապահական վարույթը պետք է կարճվի,կառավարչի գործողություններում կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի բացակայության պատճառով, քանի որ բողոքաբերը պատշաճ ծանուցված լինելով չի ներկայացել նիստերին,միաժամանակ ներկայացված ապացույցները,որպես կարգապահական խախտում որակորելու համար բավարար չեն,ուստի առաջարկում է կարգապահական վարույթը կարճել:

Հանձնաժողովի անդամ՝Ռ.Խալաթյանը վերոնշյալի հիմքով հայտնեց այն կարծիքը,որ փաստական հանգամանքների վերլուծության և համադրման արդյունքում կարելի եզրակացնել որ դիմումատուի նշած հատուկ հաշվի վարման վերաբերյալ փաստարկները համապատասխանում են իրականաությանը,այսինք կառավարչի կողմից պարտապանի անվամբ սնանկության հատուկ հաշվի բացման փոխարեն,հատուկ հաշիվ է օգտագործվել իր անվամբ բացված անձնական կամ իր ներկայացուցչի բացատրությամբ,իր անձնական ընդհանուր օգտագործման հատուկ հաշիվը:Տվյալ գործելավոճը իր կարծիքով արդարացված չէ ոչ սնանկության գարծի վարման տեսնկյունից և ոչ էլ տվյալ պարագայում ածուրդի մասնակիցների կողմից վճարումներ կատարելու հարմարության կամ հնարավորությունների առումով,այսինքն այդ գործելավոճը տարբերվում է ընդհանուր օրենքով ընդունված կարգից,այն է ամեն սնանկության գործով բանկերից մեկում պարտապանի անվամբ սնանկության հատուկ հաշվի բացման և կառավարչի կողմից այդ հաշվի վարման ընդհանուր գործնթացից,որը այս պարագայում իր կարծիքով պետք է դիտվի որպես նդհանուր վարքագծի կանոնների խախտում

և այդ խախտումը հետագայում ուղղելու և թույլ չտալու համար սնանկության գործով կառավարչը պետք է նախազգուշացվի:

Հանձնաժողովի անդամ՝Տ.Հարությունյանը նշեց,որ նախորդ նիստում լսելով դիմումատուի ներկայացուցչի բացատրությունները, ուսումնասիրելով կառավարչի ներկայացված պարզաբանումները և գործին վերաբերվող փաստաթղթերը հասկանալի է դառնում,որ բողոքի առիթ է հանդիսացել գնորդի կողմից իր իրավունքների իրականացման ահնարինության պայմանների ստեղծված իրավիճակը,որի պատճառը նա համարում է կառավարչի գործողությունները,մասնաորոպես գրավատուներին աճուրդի տեղի և ժամի մասին տեղեկացնելը,սնանկության հատուկ հաշվի չբացելը:Այդ փաստերի ուսումնասիրությունից պարզվում է,որ կառավարչի գործողությունները աճուրդի իրականացման ընթացքում եղել են իրավիճակային,այսինքն կառավարիչը բախվելով այն փաստին,որ աճուրդի դահլիճի մուտքը փակված է եղել մարդկանց կողմից,որոնք միանշանակ ագրեսիվ պահվածքով փորձել են ստեղծել կոնֆլիկտային իրավիճակ,որի արդյունքում աճուրդը հնարավոր չէր լինի անցկացնել այդ պարագայում կառավարչի գործողությունները արդեն հակված են եղել կոնֆլիկտը հարթելու կամ այն ավելի չթեծացնելուն,բայց այդ հարցը չի լուծվել մինչև անգամ ոստիկանության միջամտությունից հետո,ուստը կառավարչի կողմից կայցվել է արձանագրություն աճուրդը չակայանալու պատճառների վերաբերյալ,այն նկատառումով որ այն կտեղափոխվի մի այլ ժամանակ և վայր:Իր կարծիքով այդ որոշումը կառավարչի կողմից արդարացված է օբեկտիվ իրականության մեջ եղել է ողջամիտ:

Անդրադառնալով դիմումատուի նշված «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 23.1 հոդվածի 1-ին մասի 3-րդ և 6րդ կետերով սահմանված կառավարչի համար պարտադիր վարքագծի կանոնին,այն է.

- **նպաստել կառավարիչների նկատմամբ վստահության ձևավորմանը:**

հանձնաժողովի նախագահն հարկ համարեց ներկայացնել,որ ընդհանուր առմամբ կառավարիչը իր գործունեության պետք է իրականացնի հետևյալ սկզբունքներից ելնելով՝

1.Անկախության,

2.Օբեկտիվության,

3.Բարեխղճության,

4.Ողջամտության,

5.Արդյունավետության,նշված սկզբունքների պահպանությունն է բերում կառավաչի գործունեության նկատմամբ վստահության ձևավորմանը:

Վերլուծելով կառավարչի գործողությունները այս սկուզբունքներից ելնելով,կստացվի որ կառավարիչը գործել է անկախ ելնելով օբեկտիվ իրավիճակից և բարեխիղճ փորձելով պահպանել օրինականությունը և կողմիերի օրինական շահերը,այդ կոնֆլիտային իրավիճակում,պահպանելով բարեվարքության կանոններ,բայց հատուկ հաշվի բացման և վարման առումով չի ցուցաբերել ողջամտություն իր գործունեության արդյունավետությունը ապահովելու համար,այսինք ողջամիտ գնահատելով իրավիճակը ակնհայտ էր որ անձնական հաշիվը որպես պարտապանի անվամբ բացված սնանկության հատուկ հշիվ հայտարարելը գնորդի կամ գնորդների մոտ կարող էին առաջացնել որոշակի անհարմարություններ,կամ ընդհուպ մինչև դրամական միջոցների հաշվեգրման անհնարինություն,որը հետագայում չէր կարող ապահովել նաև սնանկության գործի արդյունավետ շարունակությունը:

Վերոնշյալի հիմքով հանձնաժողովի նախագահն առաջարկեց հայտարարել՝ քաղաքացի Լիանա Գևորգյանի սնանկության գործով կառավարիչ՝Արմինե Մովսիսյանին նախազգուշացում և հանձնարարել որպեսզի հետագայում իր գործունեության ընթացքում ամեն մի սնանկության գործով օրենքով սահմանված կարգով բացել առանձին սնանկության հատուկ հաշիվներ և գործի արդյունավետությունից ելնելով սնանկության վարույթում օգտագործել բացառապես այդ հաշիվները:

Հանձնաժողովի ներկա անդամներից Հ.Գևորգյանը արտահայտվեց.որ ինքը մնում իր կարծիքին և խնդրեց քվեարկության դնել նաև իր վարույթը կարճելու իր առաջարկը:Հանձնաժողովի անդամ Ռ.Խալաթյանը համաձայնվելով նախազգուշացման առաջարկին խնդրեց քվեարկության դնել սկզբից այդ առաջարը ,որը և դրվեց քվեարկության.

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 2
Դեմ – 1
Ձեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝

1. «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝23.02.2023թ. քաղաքացի-լիազոր անձ՝Մելանյա Արթուրի Դիմիտրյանից ստացված թիվ 21 դիմում-բողոքի հետագա ընթացքը ապահովելու՝ քաղաքացի Լիանա Գևորգյանի սնանկության գործով կառավարիչ՝Արմինե Մովսիսյանի գործողությունների /անգործության/մասնագիտական վարքագծի կանոնների խախտման և կանոնակարգերին համապատասխանության վերաբերյալ հարուցված վարույթի արդյունքներով՝ միջնորդել «ՍԳԿԿ» ԻԿԿ Դիտորդ խորհրդին «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 5 հոդվածի 5.1 կետի 5-րդ ենթակետի հիմքով ՝ քաղաքացի Լիանա Գևորգյանի սնանկության գործով կառավարիչ՝Արմինե Մովսիսյանին հայտարարել նախազգուշացում և հանձնարարել,որ իր գործունեության ընթացքում ամեն մի սնանկության գործով օրենքով սահմանված կարգով բացվել առանձին սնանկության հատուկ հաշիվներ և գործի արդյունավետությունից ելնելով սնանկության վարույթում օգտագործել բացառապես այդ հաշիվները:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Գևորգյան